ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՀԵՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎԱՌ - 2023

Հարցման արդյունքների վերլուծությունը կատարվել է ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից, 2023թ. հուլիսի 6-ին:

Որակի ապահովման բաժնի պատասխանատուներ՝

Հայրապետյան Ք.

Նախրատյան Մ.

Մուրադյան Ն.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Հարցման ընդհանուր նկարագիրը 3
II. Հարցման մեթոդաբանությունը 3
III. Գավառի պետական համալսարանում աշխատանքահեն ուսուցման իրականացման հնարավորությունների գնահատում.....4

I. Հարցման ընդհանուր նկարագիրը.

Գավառի պետական համալսարանում աշխատանքահեն ուսուցման իրականացման հնարավորությունները գնահատելու նպատակով Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) որակի ապահովման բաժնի կողմից առկա և հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների շրջանում իրականացվել է հարցում նախապես մշակված առցանց (online) անանուն հարցաթերթիկի միջոցով: Հարցումն իրականացվել է Համալսարանի անդամակցած՝ Եվրոպական Միության ‹‹ERASMUS+FLEXWBL›› ծրագրի շրջանակներում, նվիրված աշխատանքահեն կրթությանը:

II. Հարցման մեթոդաբանությունը.

Հարցաթերթը բաղկացած է փակ, բաց և ինտերվալային հարցերից: Հարցաթերթի հարցերը մշակվել և կազմվել են ԳՊՀ որակի ապահովման, արտաքին կապերի և լրատվության բաժինների աշխատակիցների և Համալսարանի դասախոսների, ուսանողների համատեղ աշխատանքի արդյունքում: Հարցաթերթի նպատակն է քանակական և որակական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, որը միտված է ԳՊՀ-ում կրթության որակի բարձրացմանը և աշխատաշուկայի պահանջներին բավարարող, գործնական աշխատանքի կարողություններ ունեցող մասնագետների պատրաստմանը:

III. Գավառի պետական համալսարանում աշխատանքահեն ուսուցման իրականացման հնարավորությունների գնահատում

Հարցմանը մասնակցել են Գավառի պետական համալսանում սովորող ուսանողների 64,31 %-ը:

1. Ընդհանուր տեղեկություններ

Հարցմանը մասնակցած ուսանողների թվաքանակն՝ ըստ մասնագիտությունների.

Գծապատկեր 1.

Բաժինը	**Հարցմանը մասնակիցների տոկոսային հարաբերությունը**
Հայոց լեզու և գրականություն	57,6%
Ռուսաց լեզու և գրականություն	66,6%
Անգլերեն լեզու և գրականություն	54%
Կենսաբանություն	50%
Սերվիս	50%
Համակարգչային ճարտարագիտություն	**98%**
Դեղագործական քիմիա	25%
Քարտեզագրություն ր կադաստրային գործ	50%
Աշխարհագրություն	0%
Իրավագիտություն	19%
Պատմություն	14%
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	65%
Ֆինանսներ /ըստ ոլոտի/	**88%**
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	68%
Տնտեսագիտություն	66%

Գծապատկերից երևում է, որ հարցմանն առավել ակտիվ մասնակցել են Համակարգչային ճարտարագիտություն և Ֆինանսներ /ըստ ոլորտի/ բաժինների ուսանողները:

Գծապատկեր 2.

Ուսանողների մասնակցությունն՝ ըստ կրթական աստիճանների



Գծապատկերից պարզ է դառնում, որ ընդհանուր հարցվողների 72%-ը բակալավրիատի, իսկ 28 %-ը մագիստրատուրայի ուսանողներ են: Եթե հաշվի առնենք, որ ԳՊՀ մագիստրատուրայում սովորող ուսանողների ընդհանուր թիվը կազմում է բուհի առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների 28%-ը, այսինքն՝ ուսանողների մոտավորապես 1/3-ը, ապա հարցաթերթին 28% պատասխանելը գնահատվում է որպես հարցմանն ակտիվ մասնակցություն:

2. Ի՞նչ ենք հասկանում «աշխատանքահեն» ուսուցում ասելով:

Հարցվողները հիմնականում տվել են հետևյալ պատասխանները.

Աշխատանքի և ուսուցման գործընթացի համադրում:

Ուսումնական տարվա ընթացքում հաճախակի պրակտիկաների անցկացում, գործնական հմտությունների ձևավորում:

Կրթությանը զուգահեռ աշխատելու հնարավորություն:

Ուսման ընթացքում համաժամանակյա աշխատանք:

Գործատուի կողմից վճարվող պրակտիկաների անցկացում:

3. Ի՞նչ առավելություններ և թերություններ կարող է ունենալ աշխատանքահեն ուսուցումը:

<u>Առավելություններ</u>

1. Աշխատանքահեն ուսուցման առավելություններն են ուսանողի գործնական հմտությունների զարգացումը, աշխատանքային միջավայրին ինտեգրումը:
2. Աշխատանքահեն ուսուցումը կապահովի մասնագիտական կարողությունների զարգացում:
3. Աշխատանքային միջավայրին հեշտ ինտեգրում, ղեկավար անձնակազմի հետ հաղորդակցման հմտությունների ձևավորում:
4. Մասնագիտական ոլորտի ուժեղ և թույլ կողմերի պատկերացում:
5. Աշխատանքահեն ուսուցումը թույլ կտա ուսանողին ճիշտ կարողանալ կառավարել ժամանակը, իր աշխատանքային պարտականություններին մոտենալ արդեն որպես աշխատակից, այլ ոչ թե պրակտիկանտ, ինչը հնարավորություն կտա ավելի պատասխանատու մոտենալ ընտրված մասնագիտական աշխատանքի հանդեպ:
6. Աշխատանքահեն ուսուցման միջոցով ուսանողը ձեռք կբերի այնպիսի հմտություններ, որոնք կնպաստեն նրան ապագայում թիմում աշխատել արդյունավետորեն, համատեղ որոշումներ կայացնել, հեշտ հաղթահարել դժվարություններ, աշխատանքային մարտահրավերներն ու խոչընդոտները:
7. Աշխատանքահեն ուսուցման միջոցով ուսանողը նախապես հնարավորություն է ստանում գնահատել գործատու կազմակերպությանը, այնտեղ ապագայում աշխատելու իր հնարարավությունները:
8. Աշխատանքահեն ուսուցման միջոցով ուսանողը հնարավորություն է ստանում նախապես ծանոթանալ գործատու կազմակերպության կանոնադրությանը, ներքին պահանջներին, փաստաթղթաշրջանառության առանձնահատկություններին:

9. Ուսանողակենտրոն ուսուցումն առաջնային պլան կմղվի:
10. Երիտասարդ տարիքից ֆինանսական անկախությունը կարելի է դիտել դրական կողմ:
11. Աշխատանքահեն ուսուցումը կնպաստի անձի պատասխանատվության բարձրացմանը, իր կարողությունների ճիշտ գնահատմանը:

<u>Թերություններ</u>

1. Աշխատանքահեն ուսուցումը կխոչընդոտի բուհում գետահետազոտական գործընթացի արդյունավետ իրականացմանը:
2. Աշխատանքահեն ուսուցման թերություններն են՝ ուսումը աշխատանքի հետ համադրելու դժվարությունները, գերծանրաբեռնվածությունը, ժամանակի սղությունը:
3. Ուսումնական գործընթացից հետ մնալը:
4. Տեսական գիտելիքները հետին պլան կմղվեն, գրադարաններից օգտվել ուանողը կդժվարանա՝ ժամանակային զբաղվածության պատճառով:
5. Վաղ հասակից աշխատանքային պարտականությունների ստանձնումը:
6. Ուսանողի գերծանրաբեռնվածությունը:
7. Աշխատանքահեն ուսուցումը բացասական կանդրադառնա ուսանող-դասախոս կապին, ուսանողը կկտրվի բուհի հիմնական ուսումնական պրոցեսից:

3. Գնահատել աշխատանքահեն ուսուցման դերը և պահանջը բարձրագույն կրթության համակարգում:



Հարցվողների 51%-ը նշել է գերազանց պատասխանը՝ այսինքն կարծում են, որ աշխատանքահեն ուսուցումը խիստ պահանջված է այժմեական բուհական կրթական համակարգում, 35%-ը նշել է լավ պատասխանը, 14%-ը նշել է բավարար պատասխանը, այսինքն դեռևս հստակ չեն պատկերացնում, թե ինչ է աշխատանքահեն ուսուցումը, կամ դեռևս չեն վստահում ուսումը աշխատանքի հետ համադրման գործընթացին:

4. Ձեր կարծիքով որո՞նք են աշխատանքահեն ուսուցման իրականացման ձևերն ու հնարավորությունները:

Հարցվողների մեծ մասը դժվարացել է ներկայացնել, թե ինչպես է պատկերացնում աշխատանքահեն ուսուցման իրականացման ձևերն ու հնարավորությունները և հիմնականում տվել են մասնավոր պատասխաններ՝ նշելով.

1. Կազմել հստակ գործատուների ցանկ, նրանց հետ իրականացնել համակարգված աշխատանք, հաշվի առնել նրանց կարծիքներն ու առաջարկությունները կրթական ծրագրերի ուսումնական պլանները և մոդուլները մշակելիս:
2. Պետք է մշակել համապատասխան ուսումնական պլան, որտեղ կառանձնացվեն բուհում սովորելու և նշված կազմակերպությունում աշխատանքի ժամերը՝ ըստ ժամաքանակի և կրեդիտների:
3. Մշակել համապատասխան մոդուլներ՝ սահմանելով ուսման և աշխատանքի ժամաքանակները և տևողությունը:
4. Աշխատանքահեն ուսուցումը իրական կարող է լինել համակցված ուսուցման դեպքում՝ չբացառելով առցանց ուսուցումը:

2.ԳՊՀ-ում աշխատանքահեն ուսուցմամբ ի՞նչ մասնագիտական կրթական ծրագրեր կցանկանայիք, որ իրականացվեր:

Հարցվողները առաջնահերթություն են տվել հետևյալ մասնագիտական կրթական ծրագրերին.

1. Համակարգչային ճարտարագիտություն

2. Տնտեսագիտություն
3. Ֆինանսներ /ըստ ոլորտի/
4. Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/
5. Տարրական մանակավարժություն և մեթոդիկա
6. Իրավագիտություն
7. Քարտեզագրություն և կադաստրային գործ
8. Սերվիս

5. Աշխատանքահեն ուսուցման իրականացումը ի՞նչով կնպաստի Ձեր՝ որպես մասանագետի կայացմանը.



Հարցվողները կարող էին միաժամանակ ընտրել մի քանի պատասխաններ: Արդյունքում՝ 69%-ը ընտրել է «Ուսումնառության արդյունավետության ապահովում» տարբերակը, 27%-ը՝ «Աշխատանքային կոնֆլիկտների բացառում», 62%-ը՝ «Գործնական նոր հմտությունների ձևավորում», 21%-ը՝ «Տեսական գիտելիքների իմացություն», 32%-ը՝ «Թիմում աշխատելու կարողությունների ձևավորում», 56%-ը՝ «Ոլորտի իրավական ակտերի և օրենքների իմացություն», 35%-ը՝ «Համակարգչային հմտություններ», 30%-ը՝ «Օտար լեզուների իմացություն», 45%-ը՝ «Հաղորդակցման հմտություններ» պատասխանները:

6. **Ներկայացրեք Ձեր առաջարկություններն աշխատանքահեն ուսուցումը ԳՊՀ-ում արդյունավետ իրականացնելու վերաբերյալ:**

Հարցվողները հիմնականում ներկայացրել են հետևյալ առաջարկությունները.

1. Ուսումնական պլանների վերանայում:
2. Գործատուների հետ նոր համաձայնագրերի, պայմանագրերի կնքում:
3. Մասնագիտական կրթական ծրագերում ամրագրված գործնական ուղղվածության իրազեկությունների վերանայում:
4. Ուսանողներին իրազեկում, քանի որ ոչ բոլորն են պատկերացնում, թե ինչ է աշխատանքահեն ուսուցումը:
5. Դասախոսական կազմին իրազեկում:
6. Աշխատանքահեն ուսուցում իրականացրած եվրոպական բուհերի առաջավոր փորձի ուսումնասիրում և ներդնում /բենչմարքինգի իրականացում/:

IV. Եզրակացություններ և առաջարկություններ.

Ամփոփելով հարցման արդյունքները՝ կարող ենք նշել, որ հարցմանը մասնակցել է ԳՊՀ ուսանողների ընդհանուր թվաքանակի 64,31%:

Հարցմանն ավելի ակտիվ մասնակցել են Համակարգչային ճարտարագիտություն բաժնի ուսանողները:

Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ հարցվողները «աշխատանքահեն» ուսուցում ասելով հիմնականում հասկանում են.

1. Աշխատանքի և ուսուցման գործընթացների համադրում,
2. Կրթությանը զուգահեռ աշխատելու հնարավորություն:

«Ի՞նչ առավելություններ և թերություններ կարող է ունենալ աշխատանքահեն ուսուցումը» հարցին ի պատասխան հարցվողների մեծամասնությունը, ի թիվս աշխատանքահեն ուսուցման բազում առավելությունների, նշել են նաև թերություններ, որոնց ուղղման նպատակով առաջարկում են.

1. Գործատուների հետ նոր համաձայնագրերի, պայմանագրերի կնքում:

2. Մասնագիտական կրթական ծրագերում ամրագրված գործնական իրազեկությունների վերանայում, դրանց ավելացում:
3. Ուսանողներին իրազեկում, քանի որ ոչ բոլորն են պատկերացնում, թե ինչ է աշխատանքահեն ուսուցումը:
4. Աշխատանքահեն ուսուցում իրականացրած եվրոպական բուհերի առաջավոր փորձի ուսումնասիրում և ներդնում ներդնում /բենչմարքինգի իրականացում/:

ԳՊՀ որակի ապահովման բաժինը, հարցման արդյունքները քննարկելով Արտաքին կապերի և լրատվության բաժնի աշխատակիցների հետ, առաջարկում է կարևորել ուսանողների առաջարկությունները՝ Համալսարանում աշխատանքահեն ուսուցման շրջանակը ներդնելու և իրականացնելու գործընթացում, այդ նպատակով օգտագործելով Համալսարանի անդամակցած՝ Եվրոպական Միության ‹‹ERASMUS+FLEXWBL›› ծրագրի արդյունքները, ծրագրի անդամ եվրոպական բուհերի հաջողված փորձը: